

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

Տփխիս. ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Փոխարքային Կովկասի Կոմս Վ.ՕՐՇՅՈՎ—ԴԱՇԿՈՎԻՆ.

Թորոսպէս վրդովուած Բեսարաբիայի պատգամաւորի Պետական Դումայում արած անվայել յարձակումից, ամբողջ հայ հոգևորականութեան և իմ կողմից յայտնում եմ Ձերդ Պայծառափայլութեան մեր անսահման յարգանքները և խորին ցաւակցութիւնը։ Ամենաբարձրեալի օրհնութիւնը թող լինի Ձեր, ամենայարգելի Կոմսուհի Ելիսաւետագ Անդրէևնայի և ամբողջ ընտանեացդ վրայ։ 21 դեկտ. 1908 *թ.*

Տեղապահ Կաթուղիկոսի ամենան Հայոց

Դէորգ Արքեպիսկոպոս Սուրենեան

Էջմիածին. Դէորգ Արքեպիսկոպոս Սուրենեանին

Շնորհակալ եմ Ձեզանից և հայ հոգևորականութիւնից ինձ և իմ ընտանիքիս օրհնելու համար։ 22 դեկտ. 1908 *թ.*

Գենեվա—Աղիտանա Վ.ՕՐՇՅՈՎ-ԴԱՇԿՈՎ

Պետերբուրգ. Պ. Նախարարին Ներքին Գործոց Սատաս—սեկրետար Սօլիպինին.

Պետական Դումայում Բեսարաբիայի պատգամաւորը ամբիոնից նեռել է հայ հոգևորականութեան և իւր հօրի հասցէին անջատական ձգտումների և յեղափոխական միտումների մեղադրանք։

Բոլոր ուժով բողոքելով անվայել յարձակումների դէմ, որ թոյլ է տուել ժողովրդական ներկայացուցիչը ամբողջ երկրի առաջ, համարձակւում եմ Ձերդ Բարձր Գերազանցութեան ուշադրութիւնը հրաւիրել յայտնի պատմական փաստերի վրա, որոնք ապացուցանում են Բարձր հոգևորականութեան և նրանց զաւակների—հայ ժողովրդի—անպայման անձնուիրութիւնը դէպի Մեծ Հովանաւորողը քրիստոնեաների աբևելքում, գեռ նախքան հայոց աշխարհի Ռուսաստանին միանալը։

Այդպիսի մեղադրանքներն ու անփաստ յարձակումները ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ Կովկասի Փոխարքայ Վորոնցով Դաշկովի դէմ, որ իր իմաստուն, մարդասէր կառավարութեամբ դրաւել է Կովկասեան ազգաբնակութիւնների ընդհանուր սէրը, խորապէս վիրաւորեցին Հաւատարիմ հայ հոգեւորականութեան զգացմունքները։ Որպէս վերջնիս ներկայացուցիչ պարտք եմ համարում խոնարհաբար խնդրել Ձեզ արկանել առ ոտս ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ, Ինքնակալ Թնամակալի հայ եկեղեցու յուզուած անսահման սիրով բաւախող և անձնուէր որդիների զգացմունքները առ Մեծ Ռուսաստանի փառապանծ գահի Միապետները. 21 դեկտ.

Տեղակալ Կաթուղիկոսի ամենայն Հայոց

Դէորգ Արքեպիսկոպոս Սարենեան.

ՔԱՂՈՒԱԾՔ ՅՕՐԱԳՐԱՅ ՕՐՆՕԴԻ

— Ի 6-ն Հոկտեմբերի Սինոդ առեալ ի նկատ զի տգէտ քահանայք շրջանին Ապարանայ միանդամայն ա-